

րեցած է 36 թուականին Գրիստոնէութեան 3 Ապրիլի 12 ժամուն: Բոլոր այս հաշիւներն որ համընթաց կ'ընթանան, ցոյց կու տան թէ Գրիստոսի խաչելութեան ուրբաթ օրը 3 Ապրիլի եղած է և 5 Ապրիլ ալ Յաբութիւն Տեառն:

Արդ որովհետեւ մեր տոմարով 5 Ապրիլը միշտ կիրակի կը պատահի, կրնանք դարձեալ առաջարկել որ այս տոմարիս գործարարութիւնը, նկատի առնելով իւր ճշդութիւնը և միօրինակութիւնն և իւր պարզութիւնը, քնդունելութիւն գտնէ թէ՛ գիտնականներէն և թէ՛ ժողովրդեանէն:

Հ. ԽՈՐԷՆ Ս.

Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻՆ ԵՒ ԽԱՉԱԿՐԱՅ

ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ

▽

ԱՐՏԱՇԻՄՔ ԹԷ ԱՊՂԱՄԱ

Դիտում չունինք Մատթէոս Ուռհայեցւոյ վրայ նոր ուսումնասիրութիւն մ'ընելու և ոչ ալ իւր անուամբ հրատարակուած տարեգրական կամ ժամանակագրական պատմութեան վերլուծումն ընելու: Հոս միակ նպատակն է պատմական ղեկքի մը իրականութիւնն ստուգել. ստուգել միանգամայն թէ ո՞ր պատահած է այդ: Այս դիտումը սակայն բռնի կը ստիպէ զմեզ Ուռհայեցւոյ գործին նկատմամբ համառօտ տեսութիւն մ'ալ յայտնելու: Եւրոպացի հայագետք, հետաքրքրուելով իւր գրութեան պարունակութիւնէն, և մեր մատենագրաց մէջ ունեցած եզակիան յատկութիւնէն, թերեւ չափէն աւելի յարգ և պատիւ մ'ընծայած են Մատթէոսի Ազգային հեղինակաց մէջ ալ կերպով մը այս պատիւն ուզած են հաստատել իրեն, հռչակաւոր մատենագէտք Հ. Ալիշան Վ. և Հ. Գարեգին Վ. Զարբհանալեան: Նե-

րուի մեզ սակայն հարցնել թէ արդեամբ արժանի է Ուռհայեցին այս պատուոյ: Հ. Գարեգին Վ. մինչ մէկ ձեռքով կը հիւսն անոր գովասանութիւնը, միւսով քող մը կ'իջեցնէ անոր համբաւոյն վրայ. կ'արժէ որ կրկնենք հոս իւր խօսքերը¹. «Ճատ անգամ կը յիշատակէ Մատթէոս թէ իւր պատմութիւնը գրելու համար՝ ականջալուր աւանդութեանց և իրմէ առաջ եղող պատմագրաց դիմած ըլլայ: Բայց թէ ո՞վ են այս պատմագիրները, ամենեկին չըսեր մեզի. ոչ անուն մը կը յիշէ, և ոչ գրուած մը յանուանէ մէջ կը բերէ... Նոյն իսկ յետագայ պատմիչք՝ կարծես թէ մեծ պիտանաւորութիւն մը չեն ուզեր տալ իր գրուածքին, բաց ի Սմբատ Գունդատապլէն²... Իւր հմտութիւնը, ինչպէս ինքն ալ անկեղծարար կը խոստովանի, չափաւոր է. ոչ իւր ազգին հնախօսութիւնը կը ճանչնայ, և ոչ անոնց վրայ գրող ազգային հեղինակները... Անժամօթ են իրեն Յունաց եկեղեցւոյն Սուրբ Հարքը... Այսպէս չկարենալով ստուգել Մատթէոսի աղբիւրները, եթէ կարծիք մը հարկ ըլլաւ կազմել, պէտք էր ըսել թէ ինքը ոչ ասորի և ոչ բիւզանդացի պատմիչներ նա յաճ ըլլալով, հարկաւ ուրեմն իրեն ժամանակակից հայկական յիշատակարաններ ու զրբեր պէտք է որ գործածած ըլլայ, որ այսօրուան օրս կորսուած են կամ ինչուան մեր ձեռքը չհասած»:

Քիչ մ'աւելի առատաձեռնութեամբ կը վարուի Հ. Ալիշան Վ.³ որ յետ հաստատելու մեր պատմիչին հմտութեան տկարութիւնը, եթէ ոչ տխմարութիւնը, ինչպէս ինքն Ուռհայեցին կը խոստովանի

1. Հմտ. Պատմագրիւն հայ. էնք պարսեան Գ. Կապուր. 1897 էջ 668-671.

2. Շատ լաւ է այս անգրագիտութիւնը, մանաւանդ ասոր յաշնդող դիտողութիւնը որ Սմբատ չիշատակի Ուռհայեցւոյն անունը: Մեր կարծեօք, հաւանական է որ նոյն իսկ Սմբատ ճանչցած ըլլայ զՄատթէոս և երկուցին պատմածն նոյնութիւնը պարզ արդիւնք մ'ըլլայ միեւնոյն աղբիւրը գործածելուն:

3. Հմտ. Հայագիտութ. Մասն Առաջին. (տպ. մեծադր. 1901) էջ 99.

իր անձինն նկատմամբ, կը զովէ անոր ըստուգապատում յատկութիւնը և շրջակայ տեղեքու աշխարհագրական լաւ ծանօթութիւնը Սակայն մենք այս երկու բարեմասնութեանց վրայ ալ տարակուսելու իրաւունք մը գտնել կը համարինք երբ իւր պատմածները համեմատենք օտար պատմըչաց աւանդածներուն հետ: Մեր կարծեօք, ի զուր է Մատթէոսի պատմութեան աղբիւրը փնտռել հայ պատմագրաց մէջ, որոնք չկան, ոչ ալ ասորի կամ Բիւզանդացի հեղինակաց մէջ, զորս բնաւ չէ ճանչցած. իւր միակ աղբիւրն եղած են մասամբ՝ իր անձամբ տեսածը, մասամբ ալ յայլոց լսած կամ հարցուցած աւանդութիւնքը, զորս զրական ձեռով ուզած է հիւսել լատինական (կամ փռանկ, ինչպէս պիտի ըսուէր այն ատեն) և արաբական ժամանակագրութեանց հետևողութեամբ: Այս մեր տեսութեան առաջին կէտը ինքն իսկ բացայայտ կերպով պարզած է ամէն անգամ որ իւր գործին վրայ խօսելու առիթը զայն թոյլ կու տայ՝, իսկ երկրորդ մասը պիտի ապացուցուի լատինական և արաբական ժամանակագիրներու համեմատութեամբ, յետ հայ բնագրին իսկութիւնը ստուգելու և սահմանելու: Ներկայ դիրքին մէջ Մատթէոսի բնագիրը թերի է և խան-

գարուած: Ոչ ոք այնքան միամիտ պիտի ուզէ ըլլալ համարելու համար որ Մատթէոս Ուռնայեցիին իւր երկասիրութիւնը սկսած ըլլայ «ԻՍկ ընդ առօրսն ընդ այնոսիկ և ի յամին ՆԱ» բացատրութեամբ: Քիչ վերջ առիթ պիտի ունենանք պակաս պարբերութիւն մ'ալ ցուցնելու Ապուսղայի պատերազմին նկարագրութեան մէջ. հոս յիշենք նաև որ կարելի չէր մի և նոյն մատենագրի մի միայն Պալտին անունն երկու տեսակ գրել, Պաղտին և Պետիկն, եթէ մի քիչ աւելի հստակութիւն ունենար պատմածին և կամ երկու զանազան աղբիւրներէ առաջնորդուած չըլլար: Սակայն այսչափս առ ժամս բաւական է իր անձին և զործին նկատմամբ. անցնինք մեր առաջադրած նպատակին:

Ազգային պատուոյ զգացման համար մեռուցում մը կը զգանք այսօր, երբ հին յիշատակներու մէջ թափառելով կը հանդիպինք դէպքերու, որոնք անշուշտ այն ատեն իրենց արդարացումն ունէին, բայց այսօր մեզի անծանօթ է անոնց սկզբնապատճառը: Այսպիսի դէպք մ'է հետեւեալը. քաղցի մը մէջ հայագգի ժողովուրդը, սաստիկ նեղուած փռանկ պահակագօրաց հարստահարութիւններէն, կ'ապստամբի, կը ջարդէ բոլոր բերդապահ զունդը

1. Մասնաւորապէս հմտ. հետեւալ բացատրութիւնները, որ օտար ձեռք մ'ալ նշմարելը դժուար պիտի չըլլայ թերեւ Յէլ 340-347 (Տպ. Երուսաղիմի 1869) կը կարդանք. «Ջամա տասն ոչ ինչ արարաց հոգս վասն այս ժամանակագրութեան, և թողեալ էաց ի բացեայ գրութեան գրութեանց. և տեսանելով մեր հոնազազոր գնաւորածասառ բարկութիւն հեղեղի վրայ քրիստոնէից, և ամ յամէ անկեալ զլորեալ լինէր զօրութիւն զօրաց և հատապցիւոց, և սեպաց զի ոչ ոք ունէր ի ժող զայս ինդրիւ, կամ ի զիր հաւաքել, զի ապազայիցն յիշատակ լիցի: Եւ ապա մեր յառաջ եկեալ յայնժամ բազում ուրախութեամբ որպէս թէ յԱստուծոյ հրամայեցաւ ինձ զայս այսպէս ի զեր հաւաքեալ և ապազայիցն թողուլ զայս յիշատակ... Արդ զայս ոչ ոք է կարող անել զոր քի մեք աքարեայ, զի զոր ինչ զրեցաց՝ զրեցաւ, զի զամս հնգետասն ունէաց զայս զորք քննութեանս, զոր ի մասնագրութիւնս ընթերցեալ զտանէաց զթուականութիւնս ժամանակացն ի յիշատակարանս զորոն, և ընդ ծերոն ի քննութիւն մտեալ զի-

զերէաց անգազար քննութեամբ և հաւաքեալ զրեցաց ի զիր զայս ինչ... Իսկ մեք ըօտ աղեմար մերոյ զիտու թեանս զայս քննեալ մացութեամբ զրեցաց ի բազում մատենագրութեանց զորս զառք վասն նեղութեանց ժամանակացս այսոցիկ, զոր ի տեղիս տեղիս զրեալ և թուղեալ էին զայն յիւրեանց յիշատակ. զոր և մեր ժողովեալ զայն ամենայն բազում հոգեբարձութեամբ. և ըսեցաց յայլոց ոմանց պատուականաց որք հասու էին ժամանակաց և նեղութեանց. և ընդ ծերոն ունէաց խոսապարզութիւն և քննութիւնս որք տեղեակ էին անցեալ մահոն...» Եւ ուրիշ զեռ շատ այսպիսի բացատրութիւններ, որոնք նոյն իսկ իրաւունք կու տան կանգահելու որ Մատթէոս իր պատմածներէն շատ քիչ բան անձամբ տեսած ըլլայ: Իսկ յէջ 185 տեսած բացատրութիւնը, «նա և այլ և ունիցի առեւ մեզ ամաց ութնից զաշխատութենէ Մատթէոսի Ուռնայեցոյ և վանաց երեքու», անտարակոյս օտար ձեռքի մը կնիքը կը կրէ:

և փռանկ մերձակայ իշխանաց վրէժխնդրութեան սպառնալիքէն սարսափահար, օգնութեան կը կանչէ Հալէպի ամիրային գունդերը, որոնց կ'ապաւնին, և որոնց առջև կը բանայ քաղաքին ղոնները: Սակայն փռանկաց վրէժխնդրութիւնը չուշանար. Հալէպի գունդերը կը խորտակուին փռանկ խաչակրաց առջև և հայ ժողովուրդը, ի պատիժ ապստամբութեան, սրոյ կը մատնուի անխնայ:

Ահա թէ ինչպէս կը պատմեն այս դէպքը ժամանակակից զանազան հեղինակներ, զորս վկայութեան կը կոչէ H. Hagenmeyer երուսաղէմայ քրիստոնեայ թագաւորութեան ժամանակագրութիւնն ու պատմութիւնը հիւսած միջոց¹:

— 1105, Ապրիլ 20. — Պատերազմն Արտաշիոյ, ընդմէջ մուսուլմանի՝ Հալէպի [իշխանին] և Դանգրէտի: Թուրքերն ու Սաբակինոսը կը հաւածուին և կը կորսնցընեն բազմաթիւ ամբոխ:

Արքիդք. — Foucher de Chartres II. XXX (*Hist. Occid. d. Crois.* III 411 A-C).

« Յամին Տեառն 1105... Ապրիլ ամսոյն մէջ, թագաւորն Հալէպի (Calipti), մուսուլման անուամբ, իւր շրջակայ սահմաններէ ոչ փոքր բանակ ժողկեց և Անտիոքայ իշխանին, Դանգրէտի դէմ, ուղղեց զեղիւր իւր գոյժ վառեալն ի պատեռագմ (cornu suum ad proeliandum nimis accensum): Սակայն Դանգրէտ ոչ թէ մարդկանց բազմութեան վրայ, այլ յԱստուած հաստատելով իրեն յուսոյն խաբիսը, լաւ կազմակերպելով իրեն բանակները, անմիջապէս ձիաւորուեցաւ ընդդէմ այն թշնամեաց: Ինչ աւելի յերկածեց Արտաշիոյ դիմաց յանդգնաբար խուժեց անոնց վրայ և Աստուծոյ օգնականութեամբ, անոնց յանկարծակի սարսափով շրջապատուած, ի փախուստ դարձուցին թիկունքնին: Փախան և հաւածուե-

ցան: Ով որ չկրցաւ փախչել, չկրցաւ մահուանէ ալ խուսափել: Սպանուածնեւրուն թիւ չկայ. անոնց երկվարաց շատերն առաւ Դանգրէտ. նոյն իսկ փախստական թագաւորին դրօշակը գրաւեց: Նա՛ իւր այսպէս շարժած եղիւրն խորտակուելով՝ հեռացաւ (Cornu suo sic quassato mutilatus abiit). Ուստի փառաւորապէս է Աստուած, որ միշտ օգնական է իւր հաւատացիոց²:

Bartolf de Nangis (անդ. 539 A.)

Lisiard de Tours (անդ. 565 D. F.) — Hist. Nicaena vel Antioch. (անդ. V. 180 C.) — Li estoire de Jérusalem et d'Antioche (անդ. V. 463 A.) — Albert d'Aix, IX, XLVII (անդ. IV, 620 C.) [Ըզ գրէ]. « Իսկ յաղթող տարին յետ զերութեան Պալտուինի Պուրկեցույ (Badewini de Burg), իսկ ի հինգերորդն Պալտուինի թագաւորին, մինչ Պալտուին գնացած էր ոչ միայն յիտալիա, այլ նաեւ ի Գաղղիա, իշխանները յարուցանելու համար ընդդէմ Ալեքսիոս... Իսկ Դանգրէտ ֆեաւացած էր ի պաշտպանութիւն քաղաքին, փոխանակ իւր ազգականին, և ինքն Դանգրէտ իւր պահակապան զօրքը զետեղած էր յՈւֆա (Rohas), մուսուլման (Brodoan), Հալէպ (Alapiae) քաղաքին փառաւոր իշխանին և Եղբայրն թուրքաց, առիթ մ'առնելով, և Դանգրէտի բարեկամութիւնն ու դաշինքը դաւաճանութեամբ դրժելով, Անտիոք քաղաքին պատկանեալ տեղերն ու քաղաքները ծանր կերպով աւարեց. յետոյ Ապարա քաղաքին եպիսկոպոսն հաւածելով, և Աստուծոյ բազմաթիւ տաճարները ընաջինջ կործանելով, դեռ սակայն չկրցաւ զոհանալ այս աւարառութեամբ և կոտորածներով, այլ հուսկ ուրեմն տաան հազար ձիաւորներ և ըսան հազար հետեականեր իւր երկրէն բերելով, դիմեց պաշարելու Անտիոք՝ քաղաքը... Դանգրէտ... առանց յա-

1. 1. 1. Revue de l'Orient Latin. Tome XII NN. 3-4. էջ 313 H. Hagenmeyer: Chronologie de l'histoire du Royaume de Jérusalem. — Règne de Baudouin I.

1. Հոս յայտնի սխալ մը սպրդած է քաղաքին անունը, որ փոխանակ Անտիոքայ պէտք էր անշուշտ Արտաշիոս գրուիլ:

պաղեղու Դուրպսէլ (Turbaysel), Ուրֆա (Rohas) և Մարաշ (Maresch) ղեսպանները ղրկելով, բոլոր ուղղափառ մարդիկը որ շրջակայից մէջ կը գտնուէին, իրեն օգնութեան կանչեց, և ռահմանեց որ Անտիոք ըլլայ ասոնց ամենուն համախմբուելու տեղը: Եւ երբ հաւաքուեցան հազարի չափ ձիաւորներ և ինն հազար հետևակներ, Անտիոքայ եպիսկոպոսը ճառ մը խօսեցաւ ամենուն... և յետոյ ըստ ազգաբարձութեան քահանայապետին՝ երեք օր ծովապահուծիւն պատուիրելէ և կատարելէ վերջ, Դանգրէտ տասն հազար ձիաւորներով և հետևակներով իջաւ մինչև ի կամուրջն Փարփար (Farfar), ուր գիշերն ամբողջ իջեալեացան: Իսկ ի ծագել երկրորդ առաւօտուն, Դանգրէտ յառնելով, յառնելով նաև իրենները, բանակներ կազմելով, դրօշակներ կանգնելով, դէպի Արտաշիա (Artesium)... դիմեցին, ուր Ռոտուան (Brodoan) անհամար բազմութեամբ ձիաւորաց և կազմութեամբ՝ բոլոր գաւառը զբաւած էր: Հոս... հրամայեց որ բանակներ և պատնէշներ շինուին և երրորդ օրը առաւօտուն կանուխ երկու կողմանէ ճակատամարտը խառնուեցաւ: Սակայն պատերազմը... մինչև իններորդ ժամ տևելով, Տեառն Յիսուսի Քրիստոսի օգնականութեամբ, քրիստոնէից բանակները անպարտելի կերպով սուկացին, և հեթանոսը հալածուեալը ու ցրուեալը միանգամայն՝ դէպի փախուստ դարձան: Իսկ Դանգրէտ և իր ընկերները զանոնք հալածելով, զոմանա ըս-

պաննեցին և ուրիշներն ալ գերի և պարտեալ բռնեցին իրենց զէնքերու և ձիերու աւարով: Յաջորդ օրը Դանգրէտ, առնելով թշնամեաց զէնքերն ու աւարները և բաժնելով [զանոնք իրեններուն], յաղթութեան մեծ փառքով և ուրախութեամբ դարձաւ յԱնտիոք: Իսկ ամենայն Քրիստոսի հաւատացեալը և քաղաքն Անտիոքայ՝ քաղաքին տէր պատրիարք ու եպիսկոպոս սաւա հանդերձ, ուրախացան ուրախութեամբ մեծաւ, զհանալով Աստուծոյ և ի Տեառն Յիսուս Քրիստոսէ, որուն ողորմութեամբ և պաշտպանութեամբն թշնամեաց բազմութենէն ազատելով այդպէս ուղղափառ իշխանն յաղթանակեց»¹:

Guillaume de Tyr XI, Q. - Raoul de Caen, որ կ'ըսէ ի զուրն CLIV-CLVI (*Hist. Occid. d. Crois* III. 714 E-715 D): «Մարքիզն (Marchisides)... կ'արշաւէ Արտաշիայ (Arthasium) վրայ: ... Զայս նախ կը պաշարէ Դանգրէտ, որուն բաղխման հազիւ կը հանդուրժեն խնայութեամբ հարուածուած (silicibus concussae) աշտարակները: Զոր լսելով Ռոտուան (Raduanus), Հալէպի (Kalepti) թագաւորը, երեսուն հազարով կը վազէ, ընդդէմ սակաւուց՝ քաղմութեան վրայ վրաստահանալով: Արտաշիացիք եւս կը միանան անոր հետ, ամէնքն հակառակ Անտիոքայ: Երկուքին մէջտեղ քարուա դաշտավայր (scopulosa planities) մը կար, ուր թէպէտ կրնային ձիերը քալել, բայց չէին կրնար բնաւ վազել... Դանգրէտ գիտ-

1. Այս նկատմամբ տես նաև ինչ որ կը գրէ ի համարն որ 1105 տարւոյ զարման կը պատկանի.

1105, Մարտի վերջը կամ ի սկզբն Ապրիլի, — Դանգրէտ կը պարտաւոր սպառազուկներու մը ընդդէմ Ռոտուանի: Հալէպի Մարգիէ կը ղրկէ ի Դուրպսէլ, Եղեւսի և Մարաշ, իր բանակին համար զօրք ժողովուելու համար:

Որոշ իբրեւ աղբիւր կը յիշատակէ Raoul de Caen, c, CLIV (*Hist. Occid. d. Crois. III, 714 D*): «Tot confluentibus in unum caulis, demum efficitur ut prescriptis aureorum numerus impetretur: quibus receptis Marchisides confortatus militiam confortat, jacentem suscitavit, inermem ar-

mat, supplet numerum qui exociderat; neque donec deficiat aureus, cessat augere militarem». — Նշելուք նաև Albert d'Aix ի այս մեր վերագրյալ թարգմանած հատուածը: Յետոյ կը յաւելու հետեւալ մեկ նութիւնը. «D'après Raoul de Caen, Tancrede, pressé par la nécessité, se serait procuré des troupes par des recrutements forcés. Albert d'Aix rapporte qu'il engagea des recruteurs à Turbessel, Edesse et Maraoh. L'époque de ces recrutements doit être la fin de Mars ou le début d'avril 1105, puisque la campagne contre Roduan commença probablement au milieu d'avril».

նալով այս բանը, մեղմով մի քիչ ետ քաշուեցաւ, թոյլ տուաւ որ հոն թշնամիները մերձենան... Եւ երբ արդէն թուրքերը այն ապահաժուտ տեղոյն վրայ կը գտնուէին, Դանգրէտ յանկարծ շանթի պէս ի մէջ կը խուժէ. անոնք դիւրաւ թիկունք կը դարձունեն... Անոնց ամբողջ յոյսերն ու հնարքները ի դերեւ կ'ելլեն. պատերեցին զանոնք նիզակներ և ճանապարհը... Ռատուան քրիստոնեաներէն քիչերը միայն նետահալը, իսկ միւս բոլոր գործն եղաւ փախուստը. իրեն աղեղնաւորներէն մաս մը փախաւ վերաւորուած, իսկ այլը սպանուած գետին կը տարածուին (caesi prosternuntur): Այսպէս Արտաշիան վերստին կը զբաւէ յաղթականն Դանգրէտ, և յետ զայն պատսպարելու (ea munita), կը վերադառնայ դէպի Անտիոք»:

— Ibn al-A'tyr, *Kamel-Attevarykh* (*Hist. Or. des Crois.* I. 227), «Եսպան ամսոյն մէջ (Սպրիլ 1105), ճակատամարտ մը տեղի ունեցաւ ընդ մէջ Դանգրէտի, Անտիոքայ իշխանի և Ռեհուանայ (Redhouan), Հալէպի իշխանին: Ռեհուան ստիպուեցաւ փախչելու: Պէտք է գիտնալ որ Դանգրէտ Արտաշ (Artah) զղեկակին պաշարման ձեռնարկած էր, ուր հրամանատար էր Ռեհուան իշխանին մէկ տեղակալը: Բնակիչները սաստիկ նեղուածն էին: Հրամանատարն իմացուց Ռեհուանայ թէ ինչ ծայրագոյն վիճակի վերածուած էր, և օգնութիւն խնդրեց: Ռեհուան ուղի ելաւ բազմաթիւ ձիաւորներով և եօթն հազար հետեւակներով, որոնց մէջ կը գտնուէին երեք հազար կամաւորներ: Նա յառաջեց մինչև ի Դիզին (Ty-zyn), որ քիչ հեռու կը գտնուէր քրիստոնէից բանակէն: Դանգրէտ, Մուսուլմաններու բազմութենէն սարսափահար, նուիրակ մը յուղարկեց առ Ռեհուան խնդրելու համար պայմանադրութիւն: Ռեհուան տրամադիր էր անոր խնդիրը կատարելու, սակայն ասպապետն (esbeheb) — ձիաւորացի գունդին զօրավարը) Սեպաւա (Sebava) հակառակեցաւ անոր: Ռատի պատերազմն սկսաւ: Փռանկները փախան ա-

ռանց մարտնչելու... յետոյ վերադարձան ռազմավայրը և Մուսուլմանք չկրցան առնոց բաղխման հանդուրժել: Եսպան Մուսուլմաններ սպանուեցան. ուրիշներ գերի տարուեցան: Իսկ հետեւակագործն նկատուամար... Փռանկներն յարձակեցան անոնց վրայ և բոլոր սրէ անցուցին, ամենափոքր մաս մը միայն անոնցմէ ազատեցաւ, և այն ալ գերի վարուեցաւ: Ժպտտամարտէն վերջ, Արտաշիոյ (Artah) պահակագործն դէպի Հալէպ քաշուեցաւ և փռանկը քաղաքը գրաւեցին»: — Kamal-ad-Din, *Histoire d'Alep* (Röhrich, *Beitr. z. Gesch. d. Kreuzz.*, I, 233 և *Hist. or. d. Crois.* III, 593). «Ռեհուան պատերազմի ձեռք զարկաւ յաջորդ 498 (= 1104 Սեպտ. 23 – 1105 սեպտ. 13) տարին, Ռեհէպ (19 մարտ – 18 ապրիլ 1105) ամսոյն մէջ և բազմաթիւ բանակի մը զուլին անցած քաղց օգնութեան ֆաքր էլ-Մուլը իպն Օմարի (Fakhr el-Mulk ibn Omar), զոր Փռանկները պաշարած էին Դրիբրոյի մէջ, Արտաշիոյ (Artah) հայերը, Փռանկներու բռնապետական վարչութենէն տաղտկացած, Ռեհուանայ [անձնատուր ըլլալով] յանձնած էին այդ բերդավայրը:

Դանգրէտ տեղեկանալով այս մատուցած թիւը, Անտիոքէն ելած էր Արտաշիան վերստին զբաւելու համար: Շրջակայ գաւառացի բոլոր Փռանկները եկած էին միանալու իրեն, և նա ի զուլի իրեն զուգորդներուն եկած և բանակ դրած էր Արտաշիոյ առջև. Ռեհուան ինքն ալ հոն գնաց իւր բանակով ի միասին... Երբ երկու բանակներն իրարու հանդէպ երեցան, ճակատամարտն սկսաւ սաստիկ բռնութեամբ: Մուսուլման հետեւակագործն ուժով տոկաց, սակայն ձիաւորաց զուգորդ յետոյ նահանջեցաւ և փախաւ: Այն ատեն ռազմին բովանդակ սաստկութիւնը հետեւակագործն վրայ ծանրացաւ: Փռանկներն ահաւոր ջարդ տուին անոնց, և անոնցմէ կրցան ազատիլ անոնք միայն որ ճակատաբաց գերքին մէջ գրուած էին, փախտականներն ապաւինեցան ի Հալէպ: Այս ճակատա-

մարտին մէջ կորսուեցաւ զրեթէ երեք հազար մարդ Ռետուանի թէ՛ ձիաւորներէն և թէ հետեակախումբէն... Այս ճակատաւ մարտը տեղի ունեցաւ Շապան ամսոյ 3-ին (= 1105, ապրիլ 20)»։ — Aboulfeda, *Annales (Hist. or, d. Crois, I, 8)*, — Ibn Khaldun (Röhrich, *Quellenbeiträge*, 10)։

Այս աղբիւրներու կարգին մէջ Hagenmeyer կը յիշատակէ նաև զՄատթ. Ուռհայեցի (էջ 378) հետեեալ պարբերութեան մէջ.

«Յայսմ ամի եկն բազմութիւն զօրաց յԱրապկաց աշխարհէն՝ տիրանալ Հաւպայ և ամենայն Տանկաց աշխարհին. և էին իբրև բիւրս երեք, եւ յայնժամ յարուցեալ քաջ զօրականն Աստուծոյ Տանգրի կոմսն Անտիոքայ, և գնացեալ ի վերայ նոցա և արար զնոսա փախստականս, և անթիւ աւարաւ դարձաւ ի քաղաքն Անտիոք»։

Արդ պէտք ենք դիտել որ այս կոչումն եղած է շատ յանդէպս. Hagenmeyer առ այս հաւանաբար տարուած է Dulaurieri մէկ սխալ ծանոթութենէն։ Ուր յէջ 82 իւր Խաչակրաց պատմաց հաւաքման (*Recueil des Historiens des croisades. Documents Arméniens*, Tome premier), թարգմանելով Մատթէոսի այս պարբերութիւնը, կը յաւելու հետեեալ ծանոթութիւնը. «Cette victoire fut remportée auprès d'Artah. Les musulmans étaient commandés par Ridhouân, prince d'Alep, dont l'étendard tomba au pouvoir des chrétiens, et qui prit la fuite le premier. (Guillaume de Tyr, XI, II et Albert d'Aix IX. XLVII). Suivant Kémâl-eddin (*ad annum* 498), les Arméniens d'Artah, secouant le joug des Franks, s'étaient donnés à Ridhouân, et c'est pour les faire rentrer dans l'obéissance que Tancrede se mit en campagne. Թէ ինչ հիման վրայ կարելի է այս հանգիստութիւնը հաստատել, մեզ բոլորովին ան-

ծանօթ է. ընդհակառակն լաւ կը տեսնենք որ Ուռհայեցին այս դէպքը աւանդած միջոց որոշ չգիտեր ճակատամարտին տեղը. չգիտեր նաև արար սասպատակաց առաջնորդին անունը, իւր պատմութիւնը կը կրէ յայտնապէս աղաւաղուած աւանդութեան մը բոլոր նշանները, ըստ իրեն՝ արաբներն են որ կը յարձակին Հալէպի վրայ և Դանգրէտ կը դիմէ, ինքնակոչ հիւր, պաշտպանելու Հալէպի ամիրայն. մինչ բոլոր միւս պատմիչները կը վկայեն թէ Արտաշիոյ ճակատամարտը տեղի ունեցաւ ընդմէջ Հալէպի ամիրային և Դանգրէտի. վերոյիշեալ հետեակներուն վրայ յաւելուէք նաև հետեեալները, զորս նոյն ինքն Hagenmeyer կը յիշատակէ իր դիտողութեանց կարգին մէջ, այսպէս.

Դիտողութիւն. Spalding, *Gesch. d. christl. Königreichs Jerusalem I*, 149. — Haken, *Gemälde aus d. Zeitalter d. Kreuzzzg. I*. 159. — Weil, *Gesch. d. Chalifen III*. 187. «Դանգրէտ յամին 498 (1105) զրաւեց Artah (Artesia) բերդադաղաքը, Հալէպի մօտ, յետ զնիտուան Scheizar-ի քով բաց դաշտավայրի վրայ խորտակելու»։ — Dulaurieri, ի *Hist. Armén. d. Crois. I*. 82 ծանօթ. — Hugler, *Boemund und Tankred*, 36. «Schaizar-ի մօտ, Օրոնդէսի վրայ, 1105 Մայիս ամսոյն մէջ, բանակները բաղխուեցան իրարու»։ — Sybel, ի Schmidt, *Zeitschrift für Geschichtswissenschaft III*, 67. «Դանգրէտ արդէն 1105 տարւոյն փետրուարին մէջ զրաւած է Արտաշիան և գլխիտուան խորտակած»։ — HGa, 203. — Röhrich, *Geschicht d. Königr's Jerusalem*, 56. — Kühne, *Gesch. d. Fürstentums Antiochia*, 12. — Chalandon, *Essai sur le règne d'Alewis Ier. Comnène*, 250. «1105, ապրիլ 20ին, Դանգրէտ կը յաղթանակէ Հալէպի Ամիրայ Roudwan-ի վրայ ի Tizin և վերստին կը զրաւէ անոր ձեռքէն զԱրտաշիա (Artah)»։ — Stevenson, *The Crusaders in the east*, 81. — Դանգրէտի և Ռո-

տուանի մէջ կատարուած ճակատամարտը տեղի չունեցաւ ի Schaizar, ինչպէս մի քանի հեղինակներ յիշատակեցին, անտաւրական արարական ձեռագիրներու սխալ ընթերցանութեան մը հետեւանքով: Այդ ճակատամարտը տրուեցաւ յԱրտաշիւս, Artasia զոր Արևմտեայք Arta կը կոչեն, քաղաք՝ որ կը գտնուի տասուերկու մղոն հեռու Անտիոքէն դէպ ի Արևմուտք — հիւսիս — արևմուտք, և հինգ մղոն հեռու ի հիւսիսակողմի Հալէպի, Deir-Samau լեռան ոտքը: Իսկ Tizin տեղը, զոր Ibn al-Atyr կը նշանակէ իբրեւ տեղի բուն ճակատամարտին, կը գտնուի անմիջապէս Արտաշիւի (Arta-յի) քով: — Kemal ed-Din միայն ճշդօրէն կը նշանակէ այս ճակատամարտիս որոշ թուականը, 20 ապրիլ 1105, և բնաւ պատճառ մը չունինք տարակուսելու իր այս տեղեկութեան ճշմարտութեան վրայ: Foucher-ի բնագիր օրինակն և անկէ յառաջ եկած միւս օրինակներ, ինչպէս նաև Ibn al-Atyr, ընդհանուր կերպով մը կ'ըսեն որ այս պատերազմը տեղի ունեցած է ապրիլ ամսոյն մէջ:

Արդ յետ այս ամէնը յիշելու՝ տեսնենք նաև Մատթէոս Ուռնայեցւոյ աւանդած պատմութիւնը. տեսանք թէ ինչ կ'աւանդէ նա մեր դէպքին նկատմամբ, որուն վրայ որոշ տեղեկութիւն մ'ունենալ չթուիր ոչ ըստ տեղւոյն և ոչ ըստ ժամանակին. — Սոյն մի և նոյն տարւոյն համար, 554 (= 23 փետր. 1105–1106 փետր. 22) նա կը յիշատակէ ուրիշ դէպք մ'ալ. [հմտ. Hist. Armén. d. Crois. I. 79].

«1105, Ամաս. — Եղեսիոյ մէջ, Մուսուլի և Մծբնայ ամիրայ Ճուկարմիշի (Tschukarmisch) դէմ, — որ պաշարած էր քաղաքը — յարձակման մը պահուն, Ռիշարտ անուամբ կառավարիչը, որուն յանձնած էր Դանգրէտ քաղաքին պաշտպանութիւնը, իւր զինուորներէն 450 հոգի կը կորսնցնէ: Եղեսիոյ բնակիչք ասոր վրայ սաստիկ հակառակութիւն (animosité) կ'ունենան ընդդէմ փռանկաց»:

Այսպէս կը գրէ Ուռնայեցին, (էջ 374). «Յայսմ ամի ժողով արարեալ ճըկըրմիշ ամիրայն Մուլայ և Մծբնայ, և զայր բազում զորօք և իշանէր ի դուռն քաղաքին Ուռնայոյ ի ժամանակա արտոյն: Եւ էր զօրագլուխ զօրաց Ֆրանկաց՝ որ ասի Ռիշարդ, զոր էր կացուցեալ պահապան քաղաքին Տանգրի, առեալ զզօրս քաղաքին, և անմտաբար հետեակօք ելեալ ի պատերազմ ընդդէմ քաջ և պատերազմող զօրացն Պարսից: Եւ հետեալ նոցա զանպատրաստութիւն զօրացն Ֆրանկաց, բախեալ զնոսա և միաբան լցին ի խանդակ քաղաքին, և միաբան ամենայն զօրքն Պարսից արարին կոտորածս արս իբրեւ չորս հազիր և յիսուն. և քերդեալ զամենեցուն զգլուխն և տարան ի Պարսիկս. և եղև սուգ մեծ յաւուր յայնմիկ ի վերայ Ուռնայոյ, վասն զի յամենայն տունս սուգ և աղաղակ լալոյ կայր, և արեամբ զարդարեալ էր ամենայն վայրք քաղաքին Ուռնայոյ: Եւ դարձաւ ճըկըրմիշն մեծաւ յաղթութեամբ յաշխարհն իւր»:

Մատթէոսէն առնելով կը յիշատակէ զայս նաև Röhricht, *Gesch. d. Königreichs, Jerusalem* 58. Իսկ Hagenmeyer այսպէս կը մեկնաբանէ. «Cet échec de la garnison franque d'Edesse doit avoir eu lieu à l'époque de la moisson en l'année 1105, donc entre Juin et Septembre. Mathieu d'Edesse est seul à le raconter; aucun autre auteur n'y fait même allusion». Սոյնպիսի բացատրութիւն մ'ալ կը յաւելու յաջորդ դէպքին նկատմամբ ալ, զոր նոյնպէս Մատթ. Ուռնայեցիէն կը քաղէ. Ապլասդայի (Ablastha) բնակիչք, Ապլիստանի (Albistan) մէջ, վրէժ կ'առնուն խռտանգանաց (oppression), զոր կը կրէին փռանկաց տիրապետութեան ներքեւ, սպաննելով փռանկները և մուսուլմաններու հետ դաշնադրութիւն կապելով»: (Մատթ. Ուռն. էջ 375) [Hist. Arm. d. Crois. I. 80].

«1105, Յայիս միևն 1106 փետր. — Յայսմ ամի ի քաղաքին որ կոչի Ապ-

լասթա (Ալպիսթան) ի Ջահան գաւառի, ահագին նեղութիւնս և վիշտս և վտանգս կրեցին ի զօրացն Ֆրանկաց. և ի սաստիկ բարկութենէ անտի խորհեցան չար հատուցանել նոցա, և արարին զյոյսն իւրեանց ի յալլագզին, և գաղտարար հանեալ մարդ և զղիմացի զհեծեալն ի ներքս ժողովեալ և առ իրար միարանեցան ազգս Հայոց և գնացին ի վերայ կլային, և աւսն ընդ զօրագլուխն Ֆրանկաց, եթէ «Արի առ զագզդ քո և գնա. Աստուած ընդ քեզ»: Եւ նորա լուեալ զայն՝ արտօնեալ որպէս զչար գազան, և ելեալ ի պատեւրազմ ի վերայ քաղաքացեացն: Յայնժամ քաղաքացիքն յաղթեալ նոցա և կոտորեցին զնոսա առ հասարակ, որ ոչ միաց ի նոցանէ և ոչ մի. և Տէր համարեցաւ նոցա զայն արդարութիւն: Եւ յայնժամ աւուր կոտորեցան իբրեւ ոգիք երեք հարիւր վասն չարեացն զորս ածին ի վերայ հաւատացելոցն. զի յաւեր դարձուցին զերկիր և քրարին անմարդարնակ փշաբեր, և խուպան եղև երկիր, առաջի նոցա այգիք և ծառք զօսացան, և երեսք դաշտաց տատակով լցեալ, և խցեալ ցամաքեցան աղբիւրք: Բարձին զսէր և զուրախութիւն ի սիրելեաց, մատնութիւն և ատելութիւն տարածեցաւ ի վերայ երկրի: Հասուցին զերթեւեկ եկեղեցւոյ ի դռն չարեաց իւրեանց, և փակեցան դռունք տաճարաց իւստուծոյ. շիջան կանթեղք ի լուսոյ, խափանեցան օրհնութիւնք Աստուծոյ ի տաճարէն Տեառն. փահանայք մատնեցան ի չար ծառայութիւնս, ի բանդս. սեղանք և աւազանք սուրբ եկեղեցւոյ փլեալ կործանեցան, և ծածկեալ եղեն խորհուրդք խաչի, և բուրուճն ինկոց մոռացեալ եղեն, և ամենայն փառաբանութիւնք Աստուծոյ արգելեալ եղեն յամենայն գաւառն Ալպասթանն: Եւ յալլ. տեղիս քակեցան ժամատեղք, արհամարհեցան քահանայքն: Վերացաւ քննութիւն սուրբ հաւատոց, հաւածեցաւ ճշմարտութիւնն, մերժեցաւ արդարութիւնն, որոշեցաւ աստուածայաշուոթիւնն, և միարան մոռացան զդատաստանն ահեղ ատենին Աստուծոյ: Այս այսպէս

գործեցաւ ի մոլի ազգէն Ֆրանկաց, վասն զի փառաւոր իշխանքն և զխաւորքն նոցա հատան, և իշխանութիւն նոցա յանրժան ձեռս անկաւ, և վասն այնորիկ յարուցին հալածանս և չարչարանս ի վերայ հաւատացելոց քրիստոսի ի ձեռն տաւ. տիկ արծաթսիրութեան իւրեանց:

Ուր Hagenmeyer հաւաքելով դիտողութիւններ և յիշատակելով հեղինակներ որ այս դէպքիս նկատմամբ ալ հետեւած են Ռոնայեցւոյ, [յորս Prutz, *Kulturgeschichte d. Kreuzzüge*, 130. — Röhrich, *Gesch. des Königreichs Jerusalem*, 58. — Dulaurier ի Hist. Armén. des Croisades, I. 80. —] այսպէս կը յաւելու «Cet événement est rapporté par le seul Mathieu d'Edesse, après des événements survenus en cette ville dans l'été de 1105; il doit être placé, semble-t-il, dans la 2^{me} moitié de l'année Arménienne 55th (= 23 février 1105–22 février 1106), soit entre juillet 1105 et février 1106»: —

Այսքան վկայութիւններ անտարակոյս կ'ապացուցանեն ամբողջ հեղինակաց միաձայն վկայութեամբ, որ ստուգիւ պատահած է մեր յիշատակած դէպքը. քաղթի մը հայ ժողովուրդն ապստամբելով՝ փառնկ պահակազօրը ջարդած է, և ինքն ալ իր կարգին կոտորուած է, օգնութեան հասնող փառնկ զինուորներէ: Ասոր վրայ նաեւ Dulaurier չտարակուսիր ամինկին, մասնաւոր հետեւեալ դիտողութեամբ ալ (Hist. Or. des Crois. Doc. Arm. I. էջ 81 ի ծանօթութեան) կերպով մը կ'արդարացնէ Հայոց գործը. «Ces récriminations amères des Arméniens contre les Franks, (կ'ըսէ նա) reproduites par Matthieu ici et en une foule d'autres endroits, sont des aveux très-curieux à noter, parce qu'elles forment la contrepartie des accusations que les Occidentaux faisaient entendre à leur tour contre les chrétiens indigènes, et que l'on trouve

consignées dans les historiens latins. Ce mécontentement réciproque explique l'attitude hostile des chefs franks, et principalement des comtes d'Edesse, à l'égard des Arméniens, leurs sujets, et les mesures rigoureuses dont ils usèrent quelquefois contre eux».

Կը մնայ միայն հիմայ ստուգել թէ ո՞ր պատահած է այդ. տեսանք որ բոլոր և բոլորական և արարական պատմիչք կը դռնեն զայն Արտաշիոյ մէջ. միայն Ուռհայ յեցին է որ կը տարածայնի և զայն կատարուած կը համարի Ապլասթա (Ալպիս տանի) մէջ. Ո՞րն է ուրիմն ստորգը. Այս տարածայնութիւնը համաձայնեցնելու համար է որ Է. Hagenmeyer կ'ուզէ երկու զանազան յիշատակութիւններ քաղին Մատթէոսէն. Արտաշիոյ պատերազմին համար կ'առնու անանուն, առանց տեղւոյ, պատերազմի մը նկարագիրը, ինչպէս տեսանք, և յետոյ նոր պատերազմ մ'ալ Ապլասթայի մէջ. Սակայն կը սխալի, բաց ի մեր վերագոյն յիշած պատճառէն, այլ նաև այն նկատելով որ Մատթէոս նախ կը պատմէ Ապլասթայի դէպքը (յէջ 375) և յետոյ այդ անանուն պատերազմ մը (յէջ 378). մինչդեռ ըստ ուղիղ ժամանակագրութեան զոր կը ջանայ Բիւսել Hagenmeyer, 1105 ապրիլ 20ին պատահած է Արտաշիոյ դէպքը. որով Ապլասթայի դէպքն ալ կը ստիպուի տեղաւորել ընդ մէջ 1105 Յուլիսի և 1106 փետրուարի. ուստի այս յետադաշնութեամբ իրարու հետ հակասութեան մէջ կը զբառնուին Մատթէոսի ժամանակագրութիւնը և Hagenmeyer-ի տարեգրութիւնը. Սակայն անկարելի չէ լուծել այս կնճիռը և պատմիչներն իրարու հետ համաձայնեցնել, եթէ ըստ իր արժանեաց առ վայր մ'անտեսենք Ուռհայեցին. միւս ամանուն յիշատակութիւն կը պատկանի մի միակ դէպքի, որ կատարուած է ստուգիւ Արտաշիոյ մէջ. իսկ Մատթէոս կը սխալի Ապլասթա անունը հնարելուն մէջ. Լսած է նա, որ Անտիոքայ և Հալպէի զօրագունդերն իրա-

բու զարնուած են, երկու քաղաքաց միջին սահմանի մը վրայ, և որոշ չգիտնալով տեղւոյ անունը, զայն համարած է Ապլասթա. Յանուն արդարութեան սակայն պէտք ենք դիտել տալ որ այս յանցանքը կրնայ բոլորովին ալ Ուռհայեցոյն չլլալ, այլ անոր՝ որ իրեն զօրծը խանգարած է. բաւական է ուշադրութեամբ կարդալ Ապլասթայի պատերազմին նկարագիրը իսկոյն անդրադառնալու համար թէ ինչպիսի աղաւաղում մը յառաջ եկած է հոն. «Յայսմ ամի, կ'ըսէ նա, ի քաղաքին որ կոչի Ապլասթա, ի Ջահան գաւառի, ահագին նեղութիւնս և վիշտս և վտանգս կրեցին ի զօրացն ֆռանկաց... և կոտորեցին զնոսա առ հասարակ, որ ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի». Յետոյ անմիջապէս կը յարէ, կտրատ և անյարիր ի մաստով մը և Լաստիվերտցոյն արժանաւոր ոճով մը. «Եւ Տէր համարեցաւ նոցա զայն արդարութիւն. Եւ յայնմ աւուր կոտորեցան իբրև ոգիք երեք հարիւր վասն չարեացն զորս ածին ի վերայ հաւատացելոցն. զի յաւեր դարձուցին զերկիր և արարին անմարդաբնակ փշաբեր». և այլն, ամբողջ էջ մը վարդապետականը մինչև հուսկ վերջին այս խօսքերն. «Այս այսպէս զործեցաւ ի մոլի ազգէն Ֆրանկաց, վասն զի փառաւոր իշխանքն և զլիաւորք նոցա հետան, և իշխանութիւն նոցա յառարժան ձեռս անկաւ, և վասն այնորիկ յարուցին հալածանս և չարչարանս ի վերայ հաւատացելոց Բիւստոսի ի ձեռն սաստիկ արձաթսիրութեան իւրեանց». Սակայն ո՞ր է Ֆրանկոց հալածանաց ու չարագործութեանց նկարագիրը. ինչպէս յետ հայոց՝ փռանկները կոտորելուն, իրենք կը կոտորուին և երկիրը կը դառնայ առեր և անմարդաբնակ փշաբեր. Անտարակոյս է ուրիմն որ հոս մեր հայ բանգիրը խանգարուած ու թերատ է. բայց այս պատահական իրը, չկրնար Մատթէոսի տգիտութիւնը պատրուակել. շատ դէպքերու մէջ արդէն յայտնուած է այդ, մինչև իսկ Եզեական ծովն Ովկիանոս փոխադրելուն մէջ. Ամէն անգամ որ Մատ

Թէոս ուղղակի փռանկ կամ արարական աղբիւր մը չունի, այլ աւանդութեան վերայ կը յենու, միշտ կը սխալի որ և է պարագայի մը մէջ. և յաճախ ինքը միայն կը մնայ պատերազմներ ու դէպքեր պատմելու մէջ, մինչև անկողմնակալ քննութիւնը տարակուսի մէջ ձգելու չափ, թէ արդեօք իրապէս կատարուած են իր պատմածները. տարակոյս՝ որ երբեմն հաւանական ստուգութեան կը հասնի մերժելու համար իրեն ականդածները: Վերագոյն տեսանք որ բացի Ապլասթայի դէպքէն — (եթէ զայս ուզենք առանձին դէպք մը նկատել Արտաշիտ պատերազմէն բոլորովին անկախ) — ինքը միայն է աւանդող նաեւ Եղեսիոյ պաշարման և Ռիշարտ կառավարչին 450 զինուոր կորսնցնելուն:

Հետեւեալ կէտերն ալ աւելի պիտի հաստատեն մեր տեսութիւնը ցուցնելով որ հայ հեղինակն շատ լաւ հմտացած չէ իր պատմածներուն և ուրիշներէ լսած աւանդութիւնը յաճախ զինքը սխալներու կ'առաջնորդեն:

Մատթէոս Ուռհայեցիի յէջ 295 կը նկարագրէ յամ ԵՄԳ (1104) պատերազմն Խառանոյ ուր պէտք է դիտել որ Տանգրի կ'անուանուի վարիչ Եղեսիոյ և Անտիոքայ յերթալն Պեմունդի յաշխարհն փռանգաց. մինչ այլ ժամանակագիրք կը դնեն զայս անմիջապէս յետ մարտին, այսպէս.

1104, de la fin de mai au milieu de juin. — Après la défaite des Francs à Harran, Boémond s'enfuit d'abord à Edesse avec Tancrede; puis, laissant celui-ci à Edesse, il rentre à Antioche.

Նոյնպէս ինքն է միայն պատմող Մարտիրի պատերազմին, յորում Պալտուին գերի կը բռնէ Ուլու Սալար ամիրայն:

1103, Septembre-Octobre. — Expédition de Baudouin d'Edesse contre les Turcs dans la région de Mardin, etca pture de l'émir Ulugh — Salar:

Աղբիւր՝ Մատթէոս Ուռհայեցի (էջ 294 Թայմս ամի... ի քաղաքն Ռախա),

Դիտողութիւնք Kugler, *Boem. und Tankred*, 25. — Röhrich, *Geschicht. d. Königr's Jerusalem*, 48. — HGa, 181, 334. — Stevenson, *The crusaders in the east*, 77. — L'expédition de Baudouin d'Edesse est mentionnée par le seul Matthieu d'Edesse. Il n'y a aucune raison de douter qu'elle ait eu lieu; d'autant plus que Matthieu, s'il n'y a pas assisté en personne, en a pu du moins voir les préparatifs et le résultat. Mais il est surprenant qu'il ne dise rien de l'expédition de Baudouin contre Rakkah, rapportée par Ibn al-Atyr. Celui-ci nous apprend que les ravages des Francs avaient changé cette région en désert et que ces ravages se poursuivirent de façon constante. Kugler et Röhrich sont donc fondés à admettre deux expéditions accomplies par les Francs, l'une à l'est d'Edesse, dans la contrée de Mardin et l'autre au sud dans le territoire de Rakkah. La distance entre Edesse et Mardin est de 170 kilomètres. Il est impossible de dire la quelle des deux expéditions eut lieu la première. J'estime que Kugler et Röhrich sont dans le vrai en plaçant l'expédition contre Mardin avant celle qui fut conduite contre Rakkah. Celle-ci ayant eu lieu en novembre 1103, la première peut être du mois de septembre ou du mois d'octobre de la même année. —

Իսկ ընդհակառակն այս դէպքերու, զորս ինքը միայն կը ճանչնայ, Մատթէոս բոլորովին կը լռէ դէպք մը որ ժամանակին բաւական մեծ զայթակողութիւն յառաջ բերաւ և ընդհանուր հաւատացելոց մէջ աղմուկ հանեց. դէպք մը, որ ուղղակի հայ ազգային պատուուն ալ կը պատկանէր և ժամանակակից լաւ տեղեկացեալ հայ հեղինակ մը պէտք չէր բնաւ անտեսել. Պալ-

տուին թագաւորն կը լքանէ կամ կ'արձա-
կէ իւր երկրորդ կինը, Դաֆնուզ (Taph-
nuz Թորոս) հայ իշխանին աղջիկը, որուն
հետ ինքն օրինաւորապէս ամուսնացած էր,
յետ իրեն առաջին կողակցին մահուան,
մինչդեռ յեղեւսիա կը նստէր: Պալտուին կը
յուզարկէ զինքը և իրբեւ կուսան կը փակէ
հաւատաւորաց մենաստանի մը մէջ՝ որ կը
կոչուէր Ս. Աննայի, Յովսափատու ձորին
մէջ՝ յերուսաղէմ: Դէպքը պատմուած է
այսպէս՝ ժամանակագրաց մէջ, որոնցմէ
կ'առնու հալեմեր. —

«1104—1105. — Թագաւորն Պալտուին
կը թողու իւր երկրորդ կինը, Taphnuz
հայ իշխանին աղջիկը, որուն հետ ամուս-
նացած էր ինքն մինչդեռ կը նստէր յեղե-
ւսիա, իւր առաջին կնոջ մահուանէն վերջ:
Փակեց զինքը Ս. Աննայի մենաստանին
մէջ ի Ձորն Յովսափատու (Abbaye de
Ste. Anne de la Vallée de Josaphat). —

Աղբիւրներ. — Guill. de Tyr, XI, 1
(Hist. Occid. d. Crois, I, 451). «Nec
solum id enorme quod de domino
patriarcha Daimberto supra memo-
ravimus factum esse contra disci-
plinam ecclesiasticam rex commi-
serat, verum etiam uxorem legiti-
mam, quam apud Edessam, dum ibi
comes esset, duxerat, absque cau-
sae cognitione, non convictam, non
confessam, lege matrimoniorum ne-
glecta, dimisit, eamque in mona-
sterio Sanctae Annæ, matris Dei
genitricis et semper virginis Ma-
riae, monacham fieri compulit vio-
lenter. Est autem idem locus Hie-
rosolymis in parte orientali, juxta
portam quae dicitur Josaphat, se-
cus locum qui tempore antiquo Pro-
batia dicebatur Piscina, ostenditur
Crypta, in qua Joachim et pre-
dictae Annae traditiones habent ve-
terum domicilia fuisse, ubi et Virgo
perpetua nata esse perhibetur. Er-
rant autem ibi III nel IV paupe-

res mulierculae vitam sanctimonia-
lem professae, quibus, gratia uxo-
ris introductæ, ampliavit possessio-
nem et patrimonium dilatavit. Causa
autem cur ab uxore diverterit apud
diversos varia ferebatur, dicentibus
aliis dominum regem ideo dimisisse
uxorem, ut, ditiozem et nobiliorem
ducendo, conditionem suam faceret
meliozem, et paupertati, qua plu-
rimum premebatur, sumpta dotis
nomine aliunde opulentia consule-
ret; aliis vero asserebant reginam
improvidam minusque prudentem
thori maritalis minus caute obser-
vasse foedera, et inde mariti indi-
gnationem incurrisse». — Guibert
de Nagent, *Gesta Dei per Francos*,
VII, XLVIII (*ibid.*, IV, 259 D): «Sed
quoniam calumniæ patere dinosci-
tur, quia uxori dicitur dedisse re-
pudium, causa sic traditur. Mulier
ipsa ex optimis terrae gentilibus o-
riunda, post maritum, ipso jubente,
Hierosolymam tendens, ad portum
usque Sancti Simeonis marina e-
vectione devenerat. Quae in cele-
riorem ibi translata carinam, dum
cursum expedire nititur, in insulam
quamdam barbaricam flaminum im-
portunitate defertur. Quam idem
insulani corripuiunt, quemdam eius
comitiae episcopum cum officiali-
bus cædunt, diu ipsam detentam
postmodum abire permittunt. Quare
cum ad vicum venisset, incontinen-
tiam ethnicam rex ipse habens non
sine ratione suspectam, a thoro pro-
prio prorsus abstentam, mutato ha-
bitu, posuit eam, cum monachabus
aliis apud beatam matrem Dei vir-
ginis matris Annam. Ipse vero gau-
det vivere cælebs, quia non est ei
colluctatio adversus carnem et san-
guinem, sed contra mundi recto-
res».

Դիտողորդի (Commentaire): Voy. Ducange *Les familles d'Outre-Mer*, éd. Rey, 11; - *Hist. litt. de la France*, X, 288; - Haken, *Gemälde d. Kreuzz.* II. 188; - Wilken, II. 399; - Funck, *Gemälde aus d. Zeitalter d. Kreuzz.* I. 267; - Damberger, *Synchron. Gesch.*, VII, 736; - *Hist. Occid. d. Crois.* III. 259 ծանօթութիւն: - H.G. 108; - Umlauff, *Balduin, König v. Jerusalem*, 8; - Hampel, *Untersuchungen über das lat. Patriarchat von Jerusalem*, 52; - Gindler, *Graf Balduin I von Edessa* (Halle 1901), 62. - Guibert de Nagent և Guillaume de Tyr և յիշատակեն միայն Պալտինի երկրորդ կնոջ Սուրբ-Աննա մենաստանին մէջ փակուելը: Guibert որ և է Թուական մը չիշատակեր, Guillaume de Tyr և պատմէ այս ղէպըն անմիջապէս 1105ի պատահարներէն առաջ: Ուրեմն (կ'ըսէ Hagenmeyer) մենք կրնանք ենթադրել որ այս ղէպըն առ առաւելն տեղի ունեցած ըլլալ 1104ին ամառ աստե՛ն, որովհետեւ Daimbert պատրիարքն զայն կը ճանչնար արդէն երբ Պոյեմոնտի հետ միասին ղէպ յԱրեւմուտս ճամբորդութիւնն ըրաւ: — Դառնալով մեր խնդրոյն, նոյն իսկ յիշուած քաղաքներու աշխարհագրական դիրքը կը վկայեն ի նպաստ Արտաշիոյ: Ապա լասթա, այժմեան և նաեւ այն ժամանակի հայ Ալպիստանը, կը գտնուի ըստ վկայութեան նոյն ինքն Ռուհայեցւոյն, Զահան գաւառին մէջ ի հիւսիսակողմէն Մարաշու. «ի քաղաքին որ կոչի Ալպիարթա (Ալպիարթան) ի Զահան գաւառի»: Հայէպի ամիրայից գունդերը հոն երթալու համար պէտք էին բոլոր քրիստոնեայ գաւառները կոխան ընել յաճախ ասպատակութեամբ և երկար պատերազմներով, մինչդեռ եղած ղէպըն պատահական և յանկարծական յարձակման ու մատնութեան մը երևոյթն ունի ըստ ամենայնի: Ուստի շատ լաւ կը յարմարի Արտաշիա, հինեւրոն Calcidia-ն, Որոնդէսի մօտ՝ Յե.

տագայ վկայութիւնը զորս արժանի կը համարինք և միանգամայն կարենոր՝ յիշատակելու, աներկբայի կերպով կ'որոշեն անոր զրաւած դիրքը:

Յամին 1104 զարնան և ամառուան միջոց. - Յոյնները կը զրաւեն Monstras կիլիկիոյ, և կանդակուզենի առաջնորդութեամբ կ'իշխեն Լաուդիկեայ նաւահանգստին: Թուրքերն ալ կը զրաւեն զԱրտաշիա (Arthasia) և կ'աւարեն բոլոր այն երկիրները (région) որ կը գտնուին ընդմէջ այս քաղաքի և Փարփատի (Farfar) կամուրջին: [Farfar = Որոնդէս, ըստ վկայութեան վեղարաւոր ուղեորի յերուսաղէմ յամին 1463. Հմմտ. *Revue de l'Orient Latin* 1909]. - Այսպէս կը պատմէ Raoul de Caen, ԳԼ. 151 (*Hist. Occid. d. Crois.* III, 712 A.) «Boamundus Antiochiam remeat. Igitur divulgato per urbes finitimas Francorum damno, Cylices, Syri, Phoenicesque exsultant, subacti pariter atque subigendi. Hi metum de corde excutient, illi de vertice jugum. Tharsum, Adana, Mamistra in jus suum revertuntur, Graecos suscipiunt, nostrates extrudunt. Turci ingrediuntur Arthasium, totam usque pontem Farfar viciniam populantur. Postremo naves Græcæ quam maxima multitudo Laodiciae portum replent, et ip-

1. Հ. Աւելան ևս իւր Սիսուանի տեղագրութեան մէջ (էջ 428) կը հաստատէ մեր այս տեսութիւնը. «Ոչ հեռի ի կողմանցս, ճամբորդի է և քաղաք մի կոչեցաւ ի Խաւակրաց՝ Արտասիա կամ Արթեսիա անուն, Artasia, Arthesia, ասան միջուակ ի հիւսիսոյ Անտիոքայ, յալմէ (յարեկից) Որոնդէս գետոյ. որոյ բնակիչը Հայք՝ ընկ. հնաւի յալմէնէն, ի մերձեցաւ առաջնոց Խաւակրաց ի կողմանց Մարաշոյ, կոտորեցին զհարստաւորիւն, և բացեալ զքրիստոնէ քաղաքին՝ մուծին ի ներքս զքրիստոնէնայ զօրականն». իսկ Michaud իւր Խաւակրաց ընդարձակ պատմութեան մէջ ակն յայտնի կը վկայէ երբ կ'ըսէ (ըստ իտալ. Թրգմ. էջ 61). «Si avanzarono i Crociati sino all'antica Calcide, chiamata allora Artesia».

sae armis plenae, non minus fabricibus atque bellicis bellum simul gerentes et fabricam. Cæmento cœmentariisque advectis, fabricare incipiunt: Saxa poscentibus parietinae abundant; munitur portus, surgit fabrica և այլն»:

Kamal ad-Din, *Chronique d'Alep* (Röhricht, *Beiträge*, I. 232; *Hist. Orient. d. Crois.*, III. 292), աւելի ուրոշ կը ցուցնէ Արտաշէոյ տեղը, թէպէտև զայն յանուանէ չիշատակէր, երբ աւանդելով վերագոյն յիշատակուած յաղթանակներն ու փոանգաց պարտութիւնները, այսպէս կը յաւելու. «Les Francs perdirent alors toutes les places qu'ils possédaient dans le territoire d'Alep, à l'exception de Hab et des châteaux de Kafar-tab, Maara et Tsouran. Alors les Francs qui étaient dans Latmin, Kafar-tab et sur les terres de Maara et d'Elbara vinrent se réfugier dans Antioche et tous ces lieux rentrèrent sous la domination de Redouan, excepté Hab. Tout le territoire d'Alep se trouvait alors en paix; les habitants retournèrent chacun chez eux; Redouan commença à reprendre courage et les troupes d'Alep allaient faire des courses sur les terres d'Antioche. Boémond sentit qu'il n'avait pas assez de forces pour défendre la ville en cas d'attaque: car, lorsque son armée fut mise en déroute par Sokman, il ne se sauva qu'un très petit nombre de ses troupes. Il prit donc le parti de repasser la mer et de venir dans sa patrie lever une nouvelle armée pour la conduire en Syrie. Il laissa le gouvernement d'Antioche et de Ro-ha en son absence à Tancrede son neveu». — Կրնանք վստահաբար հետեցնել ուրեմն որ Մատթ. Ուռհայեցոյ Ալլասարան պէտք է ուղղուի Արտաշիս:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԽԱՐՔ

Michaud: Պատուին Պուրկեցին եւ հայ վաշտակը. — Պատրիարքական նովորակ մը Հունգարիոյ Թագաւորին առջեւ. — Հայ վանորսոյք երուսաղեմայ մէջ եւ Ս. Գերեզմանին կրակը: —

Նախորդ յօդուածին մէջ Մատթէոս Ուռհայեցին փոխադրեց զմեզ խաչակրութեան դարերու յիշատակաց մէջ: Լուսոյ և խաւարի կոիւր, որ հայ կեանքին էութիւնն եղած է միշտ, և զոր հիմայ կ'ապրի բուր աշխարհ բոցերու և արեանց հեղեղներու մէջ, այն ժամանակներու քնադորոշմն եղաւ. դիցազնութիւնը ու քաջութիւնը, վատութիւն և մատնութիւնը, առաքինու-թիւնը և կիրքեր խառն ի խուռն բարդուեցան պատմագրաց զրչին ներքեւ. սիրոյ և անձնանուէր զոհերու վկայական մահեր, ոխի և վրիժառու քինախնդրութեան միջադէպեր հիւսեցին ժամանակագրաց ցանցաւ էջերը, և այսօր՝ մինչ դիւանական թղթեականներ փոշիներու և ցեցերու աւել-բաժնեւէ ապրելով, հուրերու և ջուրերու սպառիչ թափէն հատած, կը ներկայանան մեզի հմայիչ քաղցրութեամբ պարու-րուած, կը զմայլին ու կը զգածուին այն պատմութեանց մէջ անձեր ու դէպքեր, իրեր ու կիրքեր հանդիպելով, որոնք ուղղակի կը թրթռացնեն մեր սիրտերու լարե-րը: Ասոնց մին է յետագայ դէպքը, զոր ազգային և օտար պատմաբանք ու ժամանակագիրք պանծանօք յիշատակած են և զոր Michaud իւր խաչակրաց պատմութեան դիցազնագրութեան մէջ հիւսած է իրեն պայծառագոյն գոհար մը քրիստոնէական սրբազան դիցազնութեան: Այսպէս կը պատմէ նա (Է. Գիրք).

«Մեր ձեռքն ունեցած պատմութիւնն այնպիսի է, որ ամենածանր պարագաներ կը յաջորդեն իրարու թատերական եղբեր-գութեան մը տեսարաններու նման. և մի